# ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ

## Ընթացիկ հաշվետվություն

## 2008թ.տարեկան ժողովի


| | |
|---|---|
| Հասցե | ք.Երևան 0023, Արշակունյաց փ, 12 |
| Հեռախոս | . 52-53-21 |
| Ֆաքս | 52-57-13 |
| Էլփոստ | Info@yerjewel.com |
| Ինտերնետ կայք | www.yerjewel.com |

Սույն թվականի հունիսի 30 -ին տեղի ունեցավ Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը.՝

1.Ընկերության տնօրենների խորհրդի 12.06.09թ. կայացած նիստի արձանագրությունը ( N 5խ-09):
2. Տարեկան ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 1ժ-09, 30.06.09թ.):
3. Հաշվիչ հանձնաժողովի N 1, N 2 և N 3 արձանագրությունները:
4.Գլխավոր տնօրենի Ընկերության 2008թ. գործնեության վերաբերյալ հաշվետվությունը:
5. 2008թ.-ի գործնեության ֆինանսական վերլուծությունը:
6. Բաժնետերերին բաժանված հետևյալ նյութերը.՝
- ժողովի օրակարգը;
- Ընկերության 2008թ. տարեկան հաշվետվություն;
- Տնօրենների խորհրդի անդամության առաջարկվող թեկնածուների ցուցակը;
- Վերստուգիչ հանձնաժողովի անդամության առաջարկվող թեկնածուների ցուցակը;
- Քվեաթերթիկի օրինակը:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5խ-09

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստի

ք.Երևան 12.06. 2009թ.

Ներկա են տնօրենների խորհրդի հետևյալ անդամները՝

Հ. Շիրինյան
Է. Գրիգորյան
Ա. Գրիգորյան
Ռ. Դավթյան
Ա. Մաշկարյան

Խորհրդի քարտուղար՝ Ա. Ներսեսյան

Հրավիրված է՝
Վ. Խաչատրյան գլխավոր հաշվապահ

Կանոնադրության համաձայն խորհրդի նիստ անցկացնելու համար քվորումն առկա է:

**ՕՐԱԿԱՐԳ՝**
1. Ընկերության նախորդ տարվա ֆինանսական հաշվետվության հաստատում:
2.Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի անցկացման որոշում:
3. Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի հաստատում:
4.Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթվի որոշում:

5.Ընկերության տնօրենների խորհրդի անդամների առաջադրվող թեկնածուների կազմի որոշում:

Օրակարգի թիվ 1 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց գլխավոր հաշվապահ Վ. Խաչատրյանի կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունը:
Նախագահը հարցը դրեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները` կողմ 5, դեմ 0:
Ֆինանսական հաշվետվությունը հաստատվել է :

Օրակարգի թիվ 2 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց Ա.Գրիգորյանին, ժողովը 30.06.09 ժամը 15.00 գումարելու առաջարկությամբ:
Նախագահը հարցը դրեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները` կողմ 5, դեմ 0:
Ժողովի անցկացման օրը որոշվել է:

Օրակարգի թիվ 3 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց Է.Գրիգորյանին, ժողովի օրակարգում հետևյալ հարցերը հաստատելու առաջարկությամբ.`

1. Ընկերության 2008թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:
4. Ընկերության 2009թ. աուդիտ իրականացնող անձի հաստատում:
6. Տնօրենների Խորհրդի անդամների ընտրություն:

Նախագահը հարցը դրեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները` կողմ 5, դեմ 0:
Ժողովի օրակարգը որոշվել է:

Օրակարգի թիվ 4 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց Ա.Գրիգորյանին, Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու առ 15.06.09թ. առաջարկությամբ:
Նախագահը հարցը դրեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները` կողմ 5, դեմ 0:
Առաջարկությունը ընդունվել է:

Օրակարգի թիվ 5 հարցի վերաբերյալ խորհուրդը լսեց Է.Գրիգորյանին: Նա ներկայացրեց տնօրենների խորհրդի կազմի հաստատումը բաժնետերերի տարեկան ժողովի քննարկմանը դնելու հարցը:

Այն հետևյալն է.`

Շիրինյան Հրանտ
Գրիգորյան Էմիլ
Գրիգորյան Արմեն
Մանուկյան Գեղամ
Տարգաշով Արկադի

Քվեարկության արդյունքները` կողմ 5, դեմ 0:
Առաջարկված թեկնածուների ցուցակը ընդունվել է:

**Որոշումներ.`**

1.Հաստատել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունը:
2.Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարել 30.06.2009թ. ժամը 15.00:
3.Հաստատել ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը:
4.Բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել առ 15.06.09թ.:
5.Որպես տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ ընդունել Է.Գրիգորյանի առաջարկությունը և ներկայացնել ժողովի հաստատմանը:

Տնօրենների խորհրդի անդամների ստորագրությունները`

| | |
|---|---|
| Նախագահ | Հ. Շիրինյան |
| Անդամներ | Է. Գրիգորյան |
| | Ա. Գրիգորյան |
| | Ռ. Դավթյան |
| | Ա. Մաշկարյան |
| Քարտուղար` | Ա.Ներսեսյան |

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1ժ-09

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի, կայացած 2009թ. հունիսի 30-ին, ժամը 15.00

**ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ`** Ընկերության 1 095 340 տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերից կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ ( 943.096 )` այդ թվում Ընկերության 831.218 բաժնեմասի սեփականատեր «Գնոմոն» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Էմիլ Առաքելյանը:

**ՕՐԱԿԱՐԳ`**
1. Ընկերության 2008թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:
4. Ընկերության 2009թ. -ի ֆինանսական գործնեության աուդիտ իրականացնող անձի հաստատում:
5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

ժողովի նախագահ ընտրվեց Ընկերության բաժնետոմսերի նշանակալից սեփականատեր Է. Գրիգորյանը, քարտուղար՝ Ա. Ներսեսյանը (միաձայն): Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց՝ Պողոսյան Հեղինե, Հովսեփյան Խանում, Մկրտչյան Մարինե:

Ընկերության 2008թ. գործունեության տարեկան հաշվետվությունը բաժնետերերի ուշադրությանը ներկայացրեց գլխավոր տնօրեն Է. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ: Զեկուցողը սպառիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված բոլոր հարցերին:

Հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.՝

կողմ՝ 943.096 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

Օրակարգի երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ զեկուցեց Ընկերության գլխավոր հաշվապահ Վ. Խաչատրյանը:

Ժողովը հաստատեց ներկայացված հաշվետվությունները

կողմ՝ 943.096 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ առաջարկվեց 2009թ. -ի Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների աուդիտ իրականացնող անձը որոշելու նպատակով հայտարարել մրցույթ:

Առաջարկը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են

կողմ՝ 943.096 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ 0

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ նախագահը առաջարկեց ներկայացնել ժողովի հաստատմանը նորընտիր խորհրդի անդամներին հետևյալ կազմով.՝

Հրանտ Շիրինյան
Էմիլ Գրիգորյան
Արմեն Գրիգորյան
Գեղամ Մանուկյան
Արկադի Տարգաշով

Տնօրենների խորհրդի անվանական կազմը քննարկումներից հետո դրվեց գումարային քվեարկության և ստացավ հետևյալ քանակությամբ ձայներ:

| | | |
|---|---|---|
| Հ. Շիրինյան | կողմ՝ | 943.096 |
| Է. Գրիգորյան | կողմ՝ | 943.096 |
| Ա. Գրիգորյան | կողմ՝ | 943.096 |
| Գ. Մանուկյան | կողմ՝ | 943.096 |
| Ա. Կարգաշով | կողմ՝ | 943.096 |

Նախագահողը բարձրացրեց նաև Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ծախսերի փոխհատուցման հարցը: Առաջարկեց ծախսերի փոխհատուցում 400 հազ. դրամի չափով իրականացնել միայն խորհրդի անդամ Հրանտ Շիրինյանին, որը զբաղվում է Ռուսաստանի Դաշնությունում Ընկերության արտադրանքի իրացմամբ և հաճախակի կատարում է ուղևորություններ Դաշնության տարբեր քաղաքներ:

Բաց քվեարկությամբ առաջարկն ընդունվեց:

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի տվյալների տնօրենների խորհրդի անդամների բոլոր թեկնածուներն ընտրվեցին տնօրենների խորհրդի կազմում:

Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:
Ժողովի օրակարգը սպառվեց, և հայտարարվեց նրա փակումը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
1. Ընկերության 2008թ. գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատել:
2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվությունը հաստատել:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշիվը հաստատել:
4. 2009թ. -ի Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների աուդիտ իրականացնող անձը որոշելու նպատակով հայտարարել մրցույթ:
6. Տնօրենների խորհուրդը հաստատել հետևյալ կազմով.`

Ռ. Շիրինյան
Է. Գրիգորյան
Ա. Գրիգորյան
Գ. Մանուկյան
Ա. Տարգաշով

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՆԵՐՍԵՍՅԱՆ

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն   N 1

Երևանի ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 30.06.09թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 10 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 1 095 340 հատ / հանդիսանում են 943.096 բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 86,10% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝ **Խ. Հովսեփյան**

Ռ. Պողոսյան

**Մ. Մկրտչյան**

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն   N 2

Երևանի ոսկերչական գործարան-1«ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 30.06.09թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները.՝ (առկա 943.096 ձայների քանակից)

1. Ընկերության գործունեության տարեկան հաշվետվության հաստատումը.՝
կողմ - 943.096 դեմ - 0 ձեռնպահ - 0
Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատվեց:

2. Ընկերության 2008 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը.՝
կողմ - 943.096 դեմ - 0 ձեռնպահ - 0
Ընկերության 2008 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշիռը հաստատվեց:

3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատումը.՝
կողմ - 943.096 դեմ - 0 ձեռնպահ - 0
Ընկերության շահույթի և վնասի հաշիվը հաստատվեց:

4. 2009թ. -ի Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների աուդիտ իրականացնող անձը որոշելու նպատակով մրցույթի հայտարարում.՝
կողմ - 943.096 դեմ - 0 ձեռնպահ - 0

5. Տնօրենների խորհրդի անդամների ընտրության արդյունքում, որը կատարվել է գումարային (կոմուլյատիվ) մեթոդով բաժնետերերը իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.՝

| | | |
|---|---|---|
| 1. Հրանտ Շիրինյան | կողմ՝ | 943.096 |
| 2. Էմիլ Գրիգորյան | կողմ՝ | 943.096 |
| 3. Արմեն Գրիգորյան | կողմ՝ | 943.096 |
| 4. Գեղամ Մանուկյան | կողմ՝ | 943.096 |
| 5. Արկադի Տարգաշով | կողմ՝ | 943.096 |

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածուները ընտրվել են.՝

1. Հրանտ Շիրինյան
2. Էմիլ Գրիգորյան
3. Արմեն Գրիգորյան
4. Գեղամ Մանուկյան
5. Արկադի Տարգաշով

Հանձնաժողովի անդամներ՝ Խ. Հովսեփյան

Հ. Պողոսյան

Մ. Մկրտչյան

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  N 3

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 30.06.09թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 10 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 1 095 340 հատ / հանդիսանում են 943.096 բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 86,10% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ օրակարգի առաջին չորս հարցերը բաժնետերերը հաստատել են միաձայն՝ 943.096 ձայնով: Քանի որ տնօրենների խորհրդի անդամներն ընտրվում են գումարային /կումուլյատիվ/ ձևով, բաժնետերերն իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ՝

Տնօրենների խորհրդի անդամներ՝

| | | |
|---|---|---|
| 1. Հրանտ Շիրինյան | կողմ՝ | 943.096 |
| 2. Էմիլ Գրիգորյան | կողմ՝ | 943.096 |
| 3. Արմեն Գրիգորյան | կողմ՝ | 943.096 |
| 4. Գեղամ Մանուկյան | կողմ՝ | 943.096 |
| 5. Արկադի Տարգաշով | կողմ՝ | 943.096 |

Հանձնաժողովի անդամներ՝ Խ. Հովսեփյան

Հ. Պողոսյան

Մ. Մկրտչյան

ԵՈԳ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲ Ընկերության

2009թ. գործունեության հաշվետվություն

Ընկերության արտադրության ուղղություններն են.՝
- ոսկերչական իրերի պատրաստում և վաճառք,
- թանկարժեք քարերի մշակում և վաճառք,
- ոսկյա ժամացույցների (նաև թանկարժեք քարերով), թանկարժեք և գունավոր մետաղներից մեդալների, հուշամեդալների պատրաստում և վաճառք,
- ոսկերչական արտադրության սարքավորումների հարմարանքների, գործիքների պատրաստում և վաճառք,
- ոչ թանկարժեք մետաղներից (ալյումին) դետալների արտադրություն, փականների արտադրություն:

Ընկերությունը աշխատել է շահույթով: Իրացման ծախսերը կազմել են 24 մլն. , բարձր են եղել վարչական ծախսերը:
Ունեցել ենք զգալի եկամուտներ տարածքների վարձակալության շնորհիվ:
Ունենք դեբիտորական մեծ փաթեթ, որը դժվար է մաշվում:

Ցանկանում եմ նշել, որ 2009թ. անհրաժեշտ է ակտիվացնել մասնակցությունը ներքին շուկայում, չնայած ստվերային շուկայի շարունակվող բացասական ազդեցությանը:

Ընկերության արտադրանքի իրացման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է ոսկու համաշխարհային ճգնաժամով և շուկայում միջին գների անկանոն տատանումներով, իջել են ծավալները ՌԴ-ում և միջինասիական պետություններում:

2009թ. ընթացքում չի աշխատել թանկարժեք քարերի մշակման արտադրամասը, որի հիմնական պատճառը հումքի ձեռք բերման բարդություններն էին և ևս շրջանառու միջոցների պակասությունը:
Պետք է նշել, որ Ընկերությունը այսօր աշխատում է ոչ լրիվ հզորությամբ:
Աշխատանքներ են տարվում հումքի անխափան ձեռք բերման համար:
Անհրաժեշտ բոլոր միջոցառումների կազմակերպման և իրականացման համար գտնում եմ նպատակահարմար հանձնարարել պ-ն Ա.Գրիգորյանին -մշակել ճգնաժամային միջոցառումների պլան:
- միջոցառումների պլաններում ի նկատի ունենալ կազմակերպչական, ֆինանսատնտեսական միջոցառումներ, ԵՈԳ-1«ԳՆՈՄՈՆ » և ԵՈԳ գործարանների միչև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հավասարակշռությունը հնարավոր ժամանակամիջոցում վերականգնելու ուղղությամբ:
-ակտիվացնել գործողությունները ներքին շուկայում ծավալները մեծացնելու ուղղությամբ, նպատակ դնելով այդ շրջանառությունը հասցնել ընդհանուր ծավալի ( տարեկան վաճառքի )7%.
-ակտիվացնել կապերը ԵՈԳ-ի փորձարարական տեղամասի հետ, նոր իրերի թիրախային մշակման և ներդրման:
Պ-ն Հ.Եսայանին
- ավարտել ալյումինե աքսեսուարների մասսայական արտադրության կազմակերպման և ներդրման գործընթացը ի նկատի ունենալով նաև ՊՆ-ի պահանջարկը:
Պ-ն Է.Գրիգորյանին
- ներդնել ֆինանսասատնտեսական կանխատեսումների ծրագրերի համակարգը:
Պ-ն Է.Գրիգորյանին և պ-ն Վ.Խաչատրյանին
- մշակել տնտեսապես հիմնավորված պարգևատրումների կանոնակարգը:

Պ-Ն Է.Գրիգորյանին պ-Ն Հ.Եսայանին
- կազմակերպել նոր արտադրությունների իրացում
- բրենդային իրերի արտադրություն
- էլ.էրոզիոն դրոշմների արտադրություն
- 11 մեդալների արտադրություն
- 3 տեսակի ժամացույցների արտադրություն
- ադմինիստրատիվ ծախսերի կրճատում
Նշված միջոցառումների կատարումը կնպաստի ընրերության աշխատանքների բարելավմանը համաշխարհային ճգնաժամի պայմաններում:

Գլխավոր տնօրեն Է.Գրիգորյան

Ընկերության ֆինանսական վերլուծություն

Նկատի ունենալով 2008թ. Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ուզում եմ Ձեզ ներկայացնել Երևանի Ոսկերչական Գործարան – 1 «Գնոմոն» ԲԲԸ 2008թ. ֆինանսատնտեսական գործունեության որոշ տվյալներ

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու տարվա վերջի դրությամբ կազմել է 4390303,0հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 1 693 033,0հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 2 697 270,0հազ.դրամ,որոնք կազմում են ընդհանուր ակտվների համապա-տասխանաբար 38.56% և 61.44%-ը:

Ընկերության գնումների գծով դեբիտորական պարտավորության հիմնական մասը - 81.82% -ը «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ-ի նկատմամբ է:

Հատուկ ուշադրութուն եմ ուզում հրավիրել,որ Ընկերությունը ունի կրեդիտորական պարտավորություն «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ,որը 2006-2007թթ.նվազել է 122 206.0հազ.դրամ և չնայած տնտեսական բարդ իրավիճակին 2008թ. նվազել է 52 754.0 հազ.դրամով,ընդ որում «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ պարտավորությունը կազմում է ընդհանուր պարտավորությունների 93.11% -ը:

2008թ.Ընկերության արտադրանքի,ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 1 260 707.0 հազ.դրամ,որի դիմաց ունեցել ենք 24 431.0 հազ.դրամի իրացման ծախսեր,վարչական ծախսերը կազմել են 78 602.0հազ.դրամ: Նախորդ տարվա համեմատ զգալիորեն կրճատվել են վարչական և իրացման ծախսերը համապատասխա-նաբար 20.78% և 8.06%:

2008թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում զուտ շահույթը կազմել է 63 847.0ազ.դրամ:

Ոսկու գնի և արտարժույթի մեծ տատանումները զգալի կրճատեց գնորդների կողմից պատվերները:

Ակտիվների շրջանառելիության գործակիցը 0.31 է,իսկ ընթացիկ ակտիվների շրջանառե-լիության գործակիցը 0.53 է,պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակիցը 1.41:

Անկախության գործակիցը –պասիվների մեջ սեփական կապիտալի մասը 0.41 է,իրաց-վելիության գործակիցը-ընթացիկ ակտիվները ինչ աստիճանով են ծածկում կարճաժամկետ պար-տավորությունները-1.09 է :

Հիմնական խնդիրը արտաքին շուկայի համալիր ուսումնասիրումը,ապրանքների կայուն իրացման ապահովումը,արտադրության շուկայական կողմնորոշումն է:

Ընկերությունը բյուջեի,սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին:

Հարկային պարտավորություններ 08թ հազ.դրամ

| | հաշվ. | վճար. |
|---|---|---|
| ԱԱՀ | 61 376,7 | 60 100,0 |
| Ե/հ | 13 407,0 | 13 053,8 |
| Շ/հ 1% կանխավճար | 11 810,0 | 12 694,4 |
| Սոցապ վճար | 28 645,7 | 28 351,9 |
| Ամբողջը | 115239,4 | 114 200,1 |

Գլխավոր հաշվապահ Վ.Խաչատրյան

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

30 հունիսի 2009թ.

1. Ընկերության 2008թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:

2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեության հաստատում:

3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:

4. 2009թ. Ընկերության ֆինանսական գործունեության աուդիտ իրականացնող անձի հաստատում:

5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

Երևանի ոսկերչական գործարան -1 «ԳՆՈՄՈՆ» Բ Բ Ը

| N | Անուն, ազգանուն | Ծննդյան թիվը | Քաղ | Մասնագիտ. | Պաշտոնը | Սով.բաժնե-տոմս. «ԵՈԳ -1» ԲԲԸ |
|---|---|---|---|---|---|---|
| Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ | | | | | | |
| 1. | Շիրինյան Հրանտ | 1967 | ՌԴ | բժիշկ | «Մէգրան» ՍՊԸ տնօրեն | չունի |
| 2. | Գրիգորյան Էմիլ | 1938 | ՀՀ | ճարտարագետ | Նշանակալից բաժնետեր | 110963 |
| 3. | Գրիգորյան Արմեն | 1965 | ՀՀ | ճարտարագետ | «ԵՈԳ -1» ԲԲԸ իրացման գծով տնօրեն | 118 |
| 4. | Մանուկյան Գեղամ | 1973 | ՀՀ | փայլեցնող | փայլեցման տեղամասի պետ | |
| 5. | Տարգաշով Արկադի | 1962 | ՀՀ | պրոֆիլային հղկող բանվոր | պրոֆիլային հղկող բանվոր | |

**Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ**

Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

------------------------------------------------------------------------------------------------- 30 հունիսի 2009թ.
բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ տարեկան հաշվետվության հաստատում:
ԿՈՂՄ ☐ ԴԵՄ ☐ ՁԵՌՆՊԱՀ ☐

ՀԱՐՑ 2. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ 2008 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
ԿՈՂՄ ☐ ԴԵՄ ☐ ՁԵՌՆՊԱՀ ☐

ՀԱՐՑ 3. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ շահույթի և վնասի հաշվի հաստատում:
ԿՈՂՄ ☐ ԴԵՄ ☐ ՁԵՌՆՊԱՀ ☐

ՀԱՐՑ 4. Երևանի ոսկերչական գործարան-1«ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ 2009 թվականի գործունեության ֆինանսական արդյունքների աուդիտն իրականացնող անձի որոշումը:
ԿՈՂՄ ☐ ԴԵՄ ☐ ՁԵՌՆՊԱՀ ☐

ՀԱՐՑ 5. Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների ընտրություն հետևյալ կազմով.՝
ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ .............................. x 5 = ..........................

| | |
|---|---|
| Շիրինյան Հրանտ | ձայն |
| Գրիգորյան Էմիլ | ձայն |
| Գրիգորյան Արմեն | ձայն |
| Մանուկյան Գեղամ | ձայն |
| Տարգաշով Արկադի | ձայն |

......................................................................................................... ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Ս.թ. հունիսի 30 -ին, ժամը 15$^{00}$** ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ դահլիճում (Արշակունյաց 12) տեղի կունենա Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ընկերության 2008թ. գործնեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2008թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:
4. Ընկերության 2009թ. ֆինանսական գործնեության աուդիտ իրականացնող անձի հաստատում:
5. Տնօրենների խորհուրդի անդամների ընտրություն:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կկազմվի 22.06.2009թ.:
Տնօրենների խորհրդի կողմից առաջադրվող Ընկեության տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների մասին տեղեկություններ կարող եք ստանալ ս.թ. հունիսի 22-ից գործարանի անցակետում (Արշակունյաց 12):
Այլ տեղեկությունների համար դիմել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ,52-53-21:

**Ընկերության տնօրենների խորհուրդ**

# Î Á Ú ß Â Ë Å Í È Å

**30 июня** ñ.ã. â $15^{00}$ â çàëå ЕЮЗ-1 «ГНОМОН» ОАО (óë. Аршакуняц 12) ñîñòîèòñÿ ãîäîâîå îáùåå ñîáðàíèå àêöèîíåðîâ Åðåâàíñêèé þâåëèðíûé çàâîä-1 ,,ÃÍÎÌÎÍ,,.

Íà ïîâåñòêå äíÿ:

1. Óòâåðæäåíèå ãîäîâîãî îò÷¸òà äåÿòåëüíîñòè îáùåñòâà çà 2008ã.
2. Óòâåðæäåíèå ãîäîâîãî îò÷¸òà ôèíàíñîâîé äåÿòåëüíîñòè îáùåñòâà çà 2008ã.
3. Óòâåðæäåíèå îò÷¸òà ïðèáûëè(óáûòêîâ) îáùåñòâà.
4. Óòâåðæäåíèå ëèöà, ïðîâîäÿùåãî àóäèò ôèíàíñîâîé äåÿòåëüíîñòè îáùåñòâà çà 2009ã.
5. Âûáîðû ÷ëåíîâ Ñîâåòà äèðåêòîðîâ.

Ñïèñîê àêöèîíåðîâ, èìåþùèõ ïðàâî ó÷àñòâîâàòü íà ñîáðàíèè, áóäåò ñîñòàâëåí 22.06.2009ã.
Ñâåäåíèÿ î êàíäèäàòàõ â ÷ëåíû êîíòðîëüíîé êîìèññèè è ÷ëåíû ñîâåòà äèðåêòîðîâ Îáùåñòâà, ïðåäëîæåííûå ñîâåòîì äèðåêòîðîâ, ìîæíî ïîëó÷èòü ñ 22-ãî ìàÿ ñ.ã. â ïðîõîäíîé çàâîäà (Àðøàêóíÿö, 12.).
Çà ñïðàâêàìè îáðàùàòüñÿ â ÎÀÎ ,,Åðåâàíñêèé þâåëèðíûé çàâîä,, òåë.: 52-53-21.

Ñîâåò äèðåêòîðîâ îáùåñòâà.